# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/3 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և ամփոփման նիստի

ք. Ջերմուկ 22.07.2022թ.

ժամը 12:00

*Հանձնաժողովի նախագահ՝*

*Աշոտ Խաչատրյան(ԳԱՊ)*

*Հանձնաժողովի անդամներ՝*

*Արսեն Գառնիկյան(ԳԱ)*

*Աշոտ Առաքելյան(ԳԱ)*

*Վահե Ղազարյան(ԲԱ)*

*Ստեփանոս Վարդանյան(ԲԱ)*

*Հանձնաժողովի քարտուղար՝ Սմբատ Պապոյան*

***ՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին***

1. **Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով՝ 22.07.2022թ.,ժամը 11:00-ին, ք.Ջերմուկ,Մյասնիկյան 8 հասցեում:**

1.1 Ընդունել ի գիտություն, որ հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| N | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցեն | Կապի միջոցը<br>էլ.փոստ, հեռ.համար |
|---|---|---|---|
| 1. | «Ջերմուկշին» ՓԲԸ | ք.Ջերմուկ,Շահումյան 25 | seno.stepanyan@mail.ru, 091762771 |
| 2. | «Սոսմետ» ՍՊԸ՛ | ք.Մարտունի,Կարապետյան 50 | tun222@mail.ru, 094043396 |

**2. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների,պատասխանների և հրավերում կատարված փոփոխությունների մասին:**

*2.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ,պատասխաններ չեն եղել:*

***3. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված հայտի,ինչպես նաև փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.***

3.1 «Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

1) Հավելված 1-ը(Դիմում-հայտարարություն), Հավելված 1.3-ը(իրական շահառուների հայտարարագիր)և Հավելված 1.1-ը(սարքեր,սարքավորումների նկարագիր) ստորագրված չեն էլեկտրոնային ստորագրությամբ:

2) Հավելված 1.3-ի(իրական շահառուների հայտարարագիր) մեջ լրացված չէ իրական շահառուի ՀԾՀ-ն, լրացված չեն 3.5 և 3.7 բաժինները:

3) Հավելված 2-ը(գնային առաջարկ) և ծավալաթերթը ստորագրված են այլ անձի կողմից:Ներկայացնել անձի ստորագրության իրավասություն ունենալու հիմքեր:

3.2 «Սուամետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ՝ մասնավորապես.
1) Ներկայացված չէ Հավելված 1.1-ը:
2) Ներկայացված չէ ծավալաթերթը:
3) Հավելված 1.3-ի(իրական շահառուների հայտարարագիր) մեջ նշված է միայն 90% փայաբաժնին տիրապետող շահառուն(տվյալները):Խնդրում ենք ամբողջացնել:
4) Ներկայացված չէ լիազորված անձի անձնագիրը(նույնականացման համար):

4.Մասնակիցների առաջարկած գները,ըստ չափաբաժինների. ՀՀ դրամ

| Հ/Բ | Կազմակերպության անվանումը | Գնման գինը Թվերով (տառերով) | Ինքնարժեք և Շահույթ /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Ջերմուկչին» ՓԲԸ | 41946380 (քառասունմեկ միլիոն ինը հարյուր քառասունվեց հազար երեք հարյուր ութսուն) | 34955000 (երեսունչորս միլիոն ինը հարյուր հիսունհինգ հազար) | 6991000 (վեց միլիոն ինը հարյուր իննսունմեկ հազար) | 41946000 (քառասունմեկ միլիոն ինը հարյուր քառասունվեց հազար) |
| | «Սուամետ» ՍՊԸ | | 34950000 (երեսունչորս միլիոն ինը հարյուր հիսուն հազար) | 6990000 (վեց միլիոն ինը հարյուր իննսուն հազար) | 41940000 (քառասունմեկ միլիոն ինը հարյուր քառասուն հազար) |

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

1. Հաշվի առնելով սույն արձանագրության 3-րդ կետով արձանագրված անհամապատասխանությունները՝ համաձայն հրավերի 8.9 և ՀՀ կառավարության՝ 04.05.2017թ. 526-Ն որոշման 41-րդ կետերի նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով: Մասնակիցներին ծանուցել անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները՝ հակառակ դեպքում նրանց կողմից ներկայացված հայտերը կգնահատվի անբավարար և կմերժվի:

2. 1-ին կետով սահմանված անհամապատասխանությունների ամփոփումից հետո բավարար գնահատված մասնակցին(երին) համաձայն 04.05.2017թ.-ի 526-Ն կառավարության որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի և ՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/3 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.7 կետի ծանուցել մասնակցին(երին) գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման մասին՝ նշելով բանակցությունների վարման պայմանների, տևողության, օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում կողմ 5, դեմ 0:

3.Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի նախագահ՝ __________________________ Աշոտ Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ __________________________ Արսեն Գառնիկյան

__________________________ Աղասի Առաքելյան

__________________________ Վահե Ղազարյան

__________________________ Ստեփանոս Վարդանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ __________________________ Սմբատ Պապյան